

ՀՐ. Ս. ԹԱՄՐԱՋՅԱՆ, *Շիրվանզադե. կյանքը և գործը*, Հայպետհրատ, Երևան, 1961, 591 էջ, գինը 1 ո. 25 կ.:

Միայն այն երկերն են անմահ, միայն այն երկերն են դիմացել ժամանակի կործանիչ ազդեցությանը, ասել է Շիրվանզադեն, որոնք կարելույն չափ խորն են թափանցել կյանքը: Այդպիսին են հենց իրեն՝ Շիրվանզադեի երկերը: Նա, ինչպես բոլոր մեծ արվեստագետները, հաշտ է ժամանակի հետ, ժամանակի հետաժողովրդներ չի խամրեցնում նրա գրական դիմանկարը: Ընդհակառակը, ազատելով այն պատահական ու ոչ բնորոշ գծերից, ավելի պայծառ ու սիրելի է դարձնում: Շիրվանզադեի լավագույն երկերն այժմ հրատարակվում են աշխարհի բազմաթիվ լեզուներով և, կտրելով անցնելով ազգային շրջանակները, մայր դարպասներով ներս են մտնում համաշխարհային գրականության ոլորտները: Մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը կես դար առաջ Շիրվանզադեին համարել է եվրոպական հանրահռչակ հեղինակներին հավասար գրող. «...կցանկանալինը,—գրել է նա,—որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը: Երբ որ տեսնի, կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիներ, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջն էս: Այս խոսքերը ասված են Շիրվանզադեի «առիթով»: Ու թեև առիթը հանդիսավոր է, սակայն չի չափազանցված: Շիրվանզադեն հայ ռեալիստական արձակի ամենամեծ ներկայացուցիչն է: Հանդես գալով անցյալ դարի ութսունական թվականներին, նա բազմաթիվ գործերում արտացոլեց մեր կյանքի շուրջ կեսդարյա ժամանակաշրջանը իր զարգացման ու փոխակերպությունների մեջ և հսկայաքաղ առաջ մղեց հայ գեղարվես-

տական արձակի զարգացումը, այն բարձրացնելով նոր աստիճանի:

Եթե դրան ավելացնենք այն բուռն վեճերը, որ ուղեկցել են Շիրվանզադեին նրա ստեղծագործական կյանքի բոլոր շրջաններում ու չեն լուրջ մահվանից հետո, ստեղծելով ուսումնասիրության մի առանձին բնագավառ՝ շիրվանզադեադիտություն, պարզ կդառնա, որ «Շիրվանզադե»-ն այնպիսի թեմա է, որ կարող է ջուլջուտ առն ուսումնասիրողի և՛ ուժը, և՛ թուլությունները: Ավելին, մենագրական թեմաներից այն համեմատաբար զգալիներից է, վտանգավորներից: Այդ թեման հաղթահարելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն Շիրվանզադեի ստեղծագործությունն ու նրա մասին եղած հարուստ գրականությունը (առանձին ուսումնասիրություններ, հոդվածներ, արխիվային նյութեր), այլև մեր կեսդարյա (1880—1930) տնտեսական-հասարակական բաղադրական կյանքը, այդ կյանքի հեղափոխումները, հայ հասարակական մտքի այդ շրջանների պատմությունը: Լավ է, որ զգալի այդ թեմային ձևով է զարկել Հր. Թամրազյանը: Նա ճանաչված գրականագետ է: Բաղմաթիվ հոդվածներն ու ուսումնասիրությունները նոր և սովետահայ շրջանների գրականությունների մասին նրան գրել են սովետահայ գրականագետների առաջին շարքում: Տարիների ընթացքում Թամրազյանը գրել է հոդվածներ և ուսումնասիրություններ նաև Շիրվանզադեի մասին: Այդ ուսումնասիրություններից երեքը լույս են տեսել առանձին հրատարակություններով («Շիրվանզադե», «Շիրվանզադեի դրամատուրգիան» և այժմ գրախոսվող «Շիրվանզադե» ստվարածավալ ուսումնասիրությունը):

«Շիրվանզադե» մենագրությունը, ուրեմն աշխարհ է եկել օրինաչափ ծնունդով, այն երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է, գրված մարքսիստական դրականագիտության դիրքերից, նյութի խոր իմացու-

1 «Թումանյանը բնագետ», Երևան, 1939, էջ 177:

թյամբ, սիրով ու կրօնով: Աշխատութեան մեջ փայլուն կերպով դրսևորվել են հեղինակի գրականագիտական հմտութիւնն ու բարձր ճաշակը:

Մենագրական լավագույն ուսումնասիրութիւններին առաջադրվող կարևոր պահանջներէն է աղբյուրագիտութիւնը: Ուսումնասիրողը պարտավոր է տալ պրոբլեմների պատմութիւնը և ապա նշել (ասենք այդ դեպքում առանց նշելու էլ պարզ կլինի), թե ո՞րն է իր բերած նորը: Հր. Թամրազյանը հստակ պատկերացրել է իր խնդիրը և այն լավագույն կերպով լուծել ինչպէս առանձնացված «Ավանդութեան ուժը» գլխում, այնպէս էլ ամբողջ ուսումնասիրութեան մեջ: Մենք այսպիսի բաժանումը ճիշտ ենք համարում և կոմպոզիցիոն խմաստով: Ուսումնասիրողը առանձնացրած գլխում խոսում է Շիրվանզադեի ստեղծագործութեան քննադատութեան շուրջ եղած առավել կարևոր՝ հասարակական-քաղաքական հոսանքների (պահպանողական, լիբերալ և ղեմկրատական) դիրքը բնութագրող տեսակետների մասին, իսկ առանձին երկերին ու մասնակի հարցերին անդրադառնում է այդ երկերի ու հարցերի բնութեան բնագոյնում: Ընդ որում, հարցի պատմութեան ուսումնասիրութիւնը հասցված է մինչև մեր օրերը: Դրա համար պահանջվում էր հաղթահարել անցյալից ժառանգարար անցած և գոհ՝ իսկ սոցիոլոգիզմի տիրապետութեան տարիներին տարածված այն տեսակետը, թե Շիրվանզադեն լիբերալ մտածող է և բուրժուազիայի քննադատութիւնն էլ բխում է նրա՝ աշխարհայացքին հակադրվող մեթոդից: Այսպիսի մեկնակետը Շիրվանզադեին կտրում էր ժողովուրդից, չէր տեսնում նրա ազնիւ գեմոկրատիզմը, հայրենի գրականութեանը մատուցած նրա մեծ ծառայութիւնները: Ավելին, նրան տալիս էր լիբերալիզմին, ինչպէս և կոպտորեն հակադրում էր զրոյի աշխարհայացքն ու ստեղծագործական մեթոդը, դրանք դիտում էր իրեն ավտոնոմ ու զուգահէտ, միմյանց չաղբիւրող, ավելին՝ չմտեցրող բնագավառներ: Եթե հակառակ ծայրահեղութեան կողմնակիցների համար ամեն ինչ կուպիտ ձևով որոշվում էր միայն զրոյի քաղաքական հայացքներով և գեմոկրատ Մատուրյանը մեծ էր «ոչ գեմոկրատ» խոշորագույն վարպետներից, ապա աշխարհայացքը անտեսող, այն մեթոդին հակադրող քննադատները քուտ էութեան ժխտում էին նաև Շիրվանզադե-զրոյի մեծարժեք վաստակը: Այդ հայացքներն իսկ պարզելիս բարեխղճութիւն հանգես չընթելով, գոհ՝ իսկ սոցիոլոգները անցյալի գործիչներին գնահատում էին իրենց ժամանակի հայացքների չափանիշով, դրանով իսկ անտե-

ւելով պատմականութեան ճիշտ սկզբունքը: Լենինը բազմիցս նշել է, որ անցյալի գործիչներին պետք է գնահատել նրանով, թե ի՞նչ են: Եւ նրանք իրենց նախորդների համեմատութեամբ: «...Տոյստոյի հայացքների հակասութիւնները պետք է գնահատել,— գրում է Լենինը,— ոչ թե արդի բանվորական շարժման և արդի սոցիալիզմի տեսակետից (այդպիսի գնահատական, իհարկէ, անհրաժեշտ է, բայց բավական չէ), այլ վերահաս կապիտալիզմի, մասսաների բայրայման ու հողագրկման դեմ ուղղված այն բողոքի տեսակետից, որին պետք է ծնունդ տար սոսակական նահապետական դուրքը»:

Ընդ որում, դա վերաբերվում էր ոչ միայն Շիրվանզադեին: Տարիներ շարունակ բուրժուական լիբերալ դրոյ էր համարվում մեր գրաժառանգի փառքը՝ Սունդուկյանը, պահպանողական, նույնիսկ սեպտիկ տրժական էր հայտարարվում «Եւրոպ Մարգալտունու» և «Առաքյալի» հեղինակը, իրենց բնով չհիշեցնող գնահատականներով գրականութեան ուղիներում թափառում էին Տերյանն ու Վարուժանը, Բաքիին ու Մեծարենցը և ուրիշներ: Վերջին տասնամյակից տարում սովետահայ գրականագիտութիւնը, օգտագործելով նախորդ գրականագիտութեան ազնիւ մշակների վաստակը, մի մեծ բայ կատարեց առաջ: Այժմ շատ հարցեր են վերանայվում, ճշտվում, մեկնարկվում: Այդ պրոբլեմներից զժվարագույններից էր Շիրվանզադեի հարցը: Տարօրինակ է, բայց փաստ է, որ մեծ գրողին լիբերալիզմի հետ կապել են ոչ միայն լիբերալները, այլև անցյալի առաջավոր շատ մտածողներ, սովետական շրջանի գրականագետներ: Դա դարձել էր «պաշտոնական» տեսակետ, մտել ծրագրերը, ձեռնարկները, դասագրքերը: Մենք մինչև վերջին տարիները չգիտենք ոչ մի սովետահայ գրականագետի, որ Շիրվանզադեին գեմոկրատ առած լինի: Ապացույց նաև Շիրվանզադեի երկերի նախափորձին հրատարակութեան նյութերը (ծանոթագրութիւնները և այլն):

Մեծ առաձներն ավելի են բնորոշում Թամրազյանի արածի զժվարութիւնն ու մեծութիւնը: Նա նորարարի խիզախութեամբ դուրս եկավ տասնամյակների վաղեմութեամբ ու ավանդութեան ուժով ամրապնդված դիրքերի դեմ և զրեց, ապացուցեց ու հաստատեց իրեն, նորը, ճիշտը: Եւ ավելի կարևորը այս դեպքում ոչ այնքան այն է, թե ո՞վ է այդ արել (այդ էս, իհարկէ, կարևոր է), որքան այն, որ Շիրվանզադեն փրկվում է գոհ-

հիկ սոցիոլոգիական սխեմաներից և շիրման-
զաղեագիտութիւնը բարձրանում է մի նոր
աստիճանի:

Քննադատելով Շիրմանզաղեի ստեղծագոր-
ծութիւնն մասին եղած սխալ կարծիքները,
Թամրազյանը նաև ճշտել է Շիրմանզաղեի
դերն ու տեղը հայ գրականութիւնն պատմու-
թիւն մեջ: Այդ կատարելիս նա անդրադարձել
է, և չէր կարող չանդրադառնալ, հայ գրակա-
նութիւնն զարգացման ընթացքի մի շարք պրոբ-
լեմներին: Ասում ենք չէր կարող չանդրադառ-
նալ, որովհետև շղթայի մեջ որևէ մեծ գրողի
տեղի ճշտումը անպայմանորեն չի կարող եթե
ոչ նոր տեղաբաշխում, ապա մասնակի տեղա-
փոխութիւններ չառաջացնել: Մասնավորա-
բար այդ պրոբլեմի լուծմանն է նվիրված «Շիր-
մանզաղեն և իր նախորդները» ընդարձակ գլու-
խը, գրված նյութի խոր և նուրբ իմացու-
թյամբ, թող որ նաև վիճելի դրույթներով: Այդ
գլխում հիմնականում ճիշտ են լուծված Շիր-
մանզաղեի ստեղծագործութիւնը ի մոտ ա-
ղերսվող և ամբողջ հայ գրականութիւնն պատ-
մութիւնն ու գրականութիւնն համար կա-
րենք նշանակութիւն ունեցող մի շարք պրոբ-
լեմներ (քննադատական սեպիդի ակունք-
ներն ու ձեւավորումը հայ գրականութիւնն մեջ,
սեպիդի ու սոմանտիդի, մեթոդի ու աշ-
խարհայացքի, հարաբերութիւնն հարցերը):
Այս ամենը հանգեցրել են հայ գրականութիւնն
սատմութիւնն մեջ, ինչպես հպանցիկ ասացինք:
Շիրմանզաղեի դերն ու տեղի ճիշտ որոշմանը:
Սա նույնպես մենագրութիւնն խիստ կարևոր
արժանիքներից է:

Մենագրութիւնն մեջ գրված ու ճիշտ լուծ-
ված մյուս բազմաթիւ հարցերից ուզում ենք
ստանձնացնել չորսը:

Առաջին. Տարիներ շարունակ Շիրմանզաղեն
չի համարվել ազգային գրող: Տրադիցիայի
հիմքը դրեց լիբերալ գրականագիտութիւնը:
Թույլած ազգի հոգու վրա ծանրացած հարցե-
րը, ասում էին, Շիրմանզաղեն գրում է եր-
կեր, որոնք նրան (ազգին) խորթ են: Այդպէս
չեն վարվել Արուսեանի հետ, որին համարում
էին «օտար հոգի ծաղիկ», Նալբանդյանի հետ,
որի գաղափարները հռչակում էին հայի քնա-
վորութիւնը խորթ, Տերչանի հետ, որին հայա-
խոս, բայց ոչ հայ գրող կոչեցին:

Ե՛վ Արուսեանը, և՛ Նալբանդյանը, և՛ Շիր-
մանզաղեն, և՛ Տերչանը վիթխարի նորարար-
ներ էին, շատ էր նոր նրանց բերածը, շատ էր
«սոստփոր» նրանց տաղանդը, շատ էր պայծառ
նրանց լույսը և խողտում էր այդպիսի լույ-
սին անսովոր աչքը: Սակայն ժամանակը նը-
րանց կողմն էր, նրանց հետ: Շիրմանզաղեն
ազգային շահարկը ուներ նաև այլ պատ-

ճառ՝ ազգային սխալ բմբռնումը, ըստ որի
ազգային տականդականն է, հինը, արտաքին
հստկանիչներով տարրերով: Ճիշտը Գոգո-
լին, որ ճշմարիտ ազգայնութիւնը ոչ թե սա-
րսֆանը ճիշտ նկարագրելու մեջ էր տեսնում,
այլ ժողովրդի ոգու: Գրողը, ասում է նա,
«...կարող է նույնիսկ այն դեպքում էլ ազգա-
յին լինել, երբ բոլորովին կողմնակի աշխարհ
է նկարագրում, բայց դրան նայում է իր ազգա-
յին տարրերի աչքերով, ամբողջ ժողովրդի աչքե-
րով»³: Շիրմանզաղեն, ինչպես ուսու դրակա-
նութիւնն մեջ Պուշկինին, ազգային շահարկո-
ղերը նեղացնում են «հայրենակիցներ» բառի
իմաստի սահմանները և ազգային են համա-
րում այն երկերը, որոնց բովանդակութիւնը
անվամբ է ցածր դասերի կյանքից, որոնց մեջ
պատկերված է գյուղացիների ու արհեստա-
վորների կյանքը: Բելիսկին դա համարել է
լուստտ-սերմայազային (լուստտ—սոսական
տրեխ. սերմայազ—սոսական գյուղական կո-
պիտ մահուդ) տեսակետ: «...Մեզ մոտ վաղուց
ի վեր արժատացել է այն խիստ տարօրինակ
կարծիքը,—գրում է նա,—թե իբր ֆրակ հա-
գած սուս կամ կորսետ հագած սուս կինն
այլևս ուս չէ, և որ սուս ոգին զգացվում է
միայն այնտեղ, որտեղ կան զիպուն, տրեխ,
հացի օղի և թթու կաղամբ»⁴:

Այսպես չի՞ եղել նաև մեզ մոտ: Ո՞ւմ
մտքով է անցել վեճի առարկա դարձնել և ազ-
գային-հայկական շահարկը այն երկերը, ո-
րոնց մեջ պատկերված է հայ գյուղաշխարհը՝
գեղջուկներով, գեղջուհիներով, պարտատրե-
քով ու պարտապաններով, տանուտերերով, մով-
րովներով, գյուղի «պեյզաժի» անհրաժեշտ մասը
կազմող աթարի բուրգերով ու խոտի դեզերով,
լույսը երգիկից ստացող խրճիթներով, գյուղա-
ցուն՝ տրեխներով ու քիթ ծակող քրտնահոտով,
«քեղուրբանով», առածներով, բարբառով, դա-
րավոր սովորութիւններով, կարծես անփոփոխ-
ելիութիւնն դատապարտված նիստ ու կացով:
Իսկ եթե մի երկու ծերունի ու պառավ էլ լինեն
բուռնութեամբ անբաժան տուփով կամ թութու-
րիսայով՝ ամեն ինչ կատարյալ է: Այս ամենն
է պատճառը, որ Շիրմանզաղեի նկարագրած՝
տակավին պապերի պորտապարանից չկտրված
հերոսներն իսկ (որ դեռ չեն մոռացել իրենց
գյուղական ծագումն ու տրեխները) համարվել
են ազգային ոգուն խորթ կերպարներ:

Հետաքրքրական ու բնորոշ է, որ այդ վե-
ճին մասնակցել է նաև Տերչանը: «Հայ գրակա-

3 Ն. Գոգոլ, Երկերի ժողովածու, հատ. 6,
Երևան, 1955, էջ 38:

4 Վ. Բելիսկին, Լնտիք երկեր, Երևան,
1948, էջ 367:

նության գալիք օրը» զեկուցման մեջ (1914) խստորեն քննադատելով ազգային սխալ բոլորումները, նա անդրադառնում է նաև Շիրվանզադեին ներկայացված այն մեղադրանքին, թե նա «Նամուս»-ը գրելուց հետո հեռացել է հարազատ միջավայրից, «նախապատիվ է» համարել մեծ քաղաքների «բարձր» անվանված շրջանները և այդտեղից է սկսել հոգիներ վերցնել իր վեպերի համար, թե նա «սիրում է արիստոկրատական վեպերը»։ «Եվ դիտել ք որն է այդ արիստոկրատական շրջանը,—գրում է Տերյանը,—հայ վաճառականների, հայ բուրժուազիայի շրջանն է, որ հայ քննադատն արիստոկրատական է համարում»⁵։

Շիրվանզադեն, որ իր մեծ տաղանդի ուժով տեսնում էր աննախընթաց մեծամասշտաբ հեղափոխումները կյանքում, մարդկանց բժրոհումների ու հոգեբանության մեջ, այդ ամենը տեսնել չկարողացողների համար ազգային շէր, հեռանում էր «ազգային» թեմաներից, կյանքը նոր հերոսներ, ազգային խառնվածքի նոր գծեր էր ստեղծում։ Չէր կարելի ազգային դրող լինել և չտեսնել այն ամենը, ավելին՝ այս ամենից երես դարձնել, շարունակել ազգային համարել այն ամենը, ինչ հին է, սովորական, հազար անգամ կրկնված։

Երեւոյդ. Եթե դրողը ազգային չէ, ինքնին հասկանալի է, որ նրա կերտած կերպարն էլ չի կարող ճիշտ ներկայացնել ազգային բնավորությունը, նրա հոգեբանությունը։ Եվ պնդել են, թե Շիրվանզադեին չի հաջողվում հերոսների հոգեբանական վիճակները պատկերել, թե նա հեղեղան չէ։ Թամրազյանը կուտ տրամաբանություն միտել է այս մոլորությունը, միայն թե հարձակման թափի ինքնացիտով քիչ անզգույշ է արտահայտվել Նար-Գոսի մասին։⁶ Սակայն այդ մասին հետո։

Արեւոյդ. Մենագրության մեջ հիմնավորապես հերքված է Շիրվանզադեին «բնտանիքի երգիչ» համարելու անցյալի քննադատությունից եկած տրադիցիան։

«Քառուս»-ի գաղափարն իմ մեջ հղացել էր տասնութինյ տարի առաջ,—գրել է Շիրվանզադեն,—այսինքն այն ժամանակ, երբ ես դեռ Բաբվումն էի ապրում։ Դա մի գերդաստանի բնտանեկան կյանքի խոսվածությունն էր, որ ինձ վրա թողել էր խորը տպավորություն։ Երկար տարիներ ես որոճում էի այդ գաղափարը և չէի վստահանում գրի անցկացնել, մանավանդ ու սկզբնական շրջանակը բանի դնում, այնքան

ընդարձակվում էր իմ մտքի մեջ»⁶։ Սակայն ինչպե՞ս ներկայացնել տասնութինյ տարի գրադեցնող գաղափարը, աստիճանաբար «շրջանակները» ընդլայնող նյութը։ Մեծ դրողը գտնում է լուծումը՝ բուրժուական աշխարհի բոլոր ներկայացնել մի բնտանիքի օրինակով։ Վերադառնալով հիմքում դնել իր վրա «խորը տպավորություն» թողած մի «գերդաստանի բնտանեկան խոսվածությունը» և, իրեն տպավորված ընդհանրացում, այն դարձնել ողջ բուրժուական հասարակության պատկերը։ Հաշու չլինելով այս ամենին, Շիրվանզադեին «բնտանիքի երգիչ» համարողները «բնտանեկան վեպի» մեջ են գրել նաև «Քառուս»-ը։ Դժամարտությունն այն է, որ «Քառուս»-ը միայն հղացմամբ և «մատուցման» ձևով է «մի գերդաստանի» պատկեր, իսկ բոլոր նյութն նա բուրժուական հասարակության ամենախոր ու ամբողջական նկարագիրն է հայ, և թերևս ոչ միայն հայ, գրականության մեջ։ «Քառուս»-ը մի ամբողջ աշխարհ է՝ արդյունաբերական խոշոր քաղաքը իր բոլոր դասերով ու ոլորտներով։ Վերադառնալով «են» արդյունաբերողներ, վաճառականներ, գործակատարներ, բանվորներ, հոգևորականներ, մամուլի ներկայացուցիչներ, տարբեր ազգերի մարդիկ։

Չորրորդ. Շիրվանզադեի կրած ազդեցությունների հարցը շատ վեճեր է հարուցել, այդտեղ խճճվածություն ստեղծելուն ակամա օգնել է և ինքը՝ Հեղինակը, հակասական տվյալներ հաղորդելով իր նախասիրությունների, օրինակ, ուսումնականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին։ Նաև այդ էր պատճառը մամուլի էջերում Թամրազյանին վերջերս ներկայացրած ու ետ վերցրած մեղադրանքի։ Գրականագետը հանգել է միակ ճիշտ եզրակացության՝ Շիրվանզադեն օգտագործել է ինչպես հայ, այնպես էլ ուսումնական և եվրոպական գրականությունների լավագույն տրադիցիաները։

«Շիրվանզադեն» մենագրության պրոբլեմատիկությունը յուրատեսակ տեսք է տվել նրա կոմպոզիցիային։ Հեղինակը չի քննում Շիրվանզադեի բոլոր երկերը, երբեմն նույնիսկ բավականին հայտնի նաև այդ երկերը (բացառությամբ մի քանիսի) խմբավորում է առանձին պրոբլեմների շուրջը, վերլուծում այդ պրոբլեմը արտացոլող հիմնական երկերը, ապա անդրադառնում մյուս երկերին այնքանով, որքանով դրանք լրացնում են քննարկվող պրոբլեմը, այն ցույց տալիս մի այլ տեսանկյունից։ Ընդ որում իրեն մենագրության անուրանալի ար-

⁵ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 2, 1961, էջ 263։

⁶ Շիրվանզադե, Կյանքի բովից, Երևան, 1930, էջ 319—320։

ժամիր ուզում ենք նշել հեղինակի բնութա-
վերլուծական ճիշտ մեթոդը: Հակադրվելով
«նախ ցաղափարը, ապա՝ արվեստը» մի ժա-
մանակ բավական տարածված և այժմ դան-
դաղ ու դժվար հաղթահարվող մեթոդին, նա
վերլուծությունը չի անջատում «նախ»-ի և
«տալ»-ի, երկերը սկսած հղացումից մինչև
սյուժեն, կոմպոզիցիան և արտահայտչական
միջոցները բնութա է իրեն արվեստի գործեր:

Մասնավորաբար ուզում ենք նշել Շիրվանզա-
դեի երկու գլուխ գործոցների՝ «Փառս»-ի և
«Պատվի համար»-ի հանդամանալից, խորը,
հմուտ ու նուրբ վերլուծությունները: Ամբող-
ջականության, ավարտունության իմաստով
միանգամայն տեղին է «Գրողի ավանդները»
դժբախտաբար համառոտ գրված գլուխը: Անդ-
րադառնալով «Շիրվանզադեի և մեր օրերը»,
Շիրվանզադեի թողած ավանդների կենսունա-
կունության հարցին, հեղինակը տեղ-տեղ Շիր-
վանզադեին այսօր օգտագործելու, նրանից
սովորելու մասին ճիշտ ու խոր մտքեր է
հայտնել:

Անցնենք դիտողություններին:

Սենագրության մեջ ասված է. «Ազգային
ինքնուրույն գրականության ճանապարհը,
հատկապես սեփականության ինքնատիպ գրակա-
նության ճանապարհը սկիզբ է առնում 60-ա-
կան թվականներին: Այնպես որ այդ շրջանում
արդեն մեզանում ստեղծվում էր եվրոպական
իմաստով ազգային ինքնուրույն գրականու-
թյուն՝ վեպ, դրամա, բնարկագրություն»⁷:
Ինքնուրույն գրականության ճանապարհը
սկիզբ է առնում, մեր կարծիքով, ոչ թե 60-
ական թվականներից, այլ 40-ական: Պետք է
սկսել հիմքերի հիմքից—«Վերք Հայաստանի»-
ից, որից Թումանյանը հաշվում էր «հայոց նոր
գրականության սկզբնավորումը» և որի տպա-
գրությունը համարում էր «հայ մտքի տուն»:
Չմոռանանք նաև Նալբանդյանին, որը «Վեր-
քը» համարեց «ազգային բանաստեղծության
(իմա՝ գրականության) մի հարազատ գաղա-
փար», մի երկ, որի մեջ «մարմին է առել ազգի
հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացո-
ղությունը»⁸: Այլ անգամ՝ ավելի վճռական.
«...Մենք պարտականություն ունինք հրատա-
րակել, թե պ. Նալբանդյանի չվերքը Հայաստա-
նին» և «Սոս և Վարդիթերը» հիմք դրին ար-
գյան ազգային վիպասանությանը⁹: Այս գնա-

հատկանիշները, որ բոլորս սիրով ու միշտ մեջ
ենք բերում, ճիշտ են և ուրիշ կողմով. «Վերք»-ը
լինելով ազգային զարթոնքի արտահայտու-
թյուն, իր հերթին հզորապես խթանել է հայ
ժողովրդի ազգային զարթոնքին: Կրկին հի-
շենք, թե ազգայինը ինչպես է բանաձևել Գե-
գարը, մի բանաձևում, որ արժանացել է Բե-
լինսկու անվերապահ հիացմունքին և ցայսօր
համարվում է անվիճելի: Ազգային դրող-
կյանքին նայում է «...իր ազգային տարերքի
ւշերքով, ամբողջ ժողովրդի աչքերով... զգում
ու խոսում է այնպես, որ իր հայրենակիցներին
թվում է, թե հենց իրենք են այդ զգում ու հո-
սում»¹⁰: Իսկ մի՞թե Արուսյանը ժողովրդի աչ-
քերով չի նայել կյանքին, մի՞թե նա այնպես չի
գրել, որ հայրենակիցներին թվա, թե իրենք էն
սգում ու խոսում: «Վերք»-ում են մեր ժողո-
վրդի պատմությունն ու ներկան, մեր մարդիկ
իրենց կյանքով, կենցաղով, մտքերով ու զգաց-
մունքներով, մեր բնաշխարհն իր տիտանա-
կան պայքարներով: Խիստ համառոտ՝ «Վերքը»
սովորական լինել է Հայաստանով, հայկականով:
Ինչ վերաբերում է եվրոպական իմաստով վեպին
կամ բնարկագրության, նշենք նախ, որ Նալ-
բանդյանը բնադատելով «Վերք»-ը թերագնա
հատելու տենդենցները, այն հենց «Եվրոպա-
կան կանոնով» վեպ չուշակեց: Երկրորդ՝ ինչու
հայ ազգայինը որոշելու համար «Եվրոպական
իմաստի» չափանիշին դիմենք: Մենք խորհուրդ
կտալինք հեղինակին հաշվի առնել մինչև 60-
ական թվականները տպագրված նաև ուրիշ
բազմաթիվ գործեր, որոնք առանձին վերցրած
կարող են շատ նշանակալից չլինել: Բայց որոնք
սխախն իրավունք են տալիս հետազոտողին
ազգային գրականության ճանապարհի 40-ա-
կան թվականների սկսած գիծը տանել նաև
50-ական թվականներով: Հիշենք, որ մինչև
60-ական թվականները տպագրվել էին Արիշա-
նի «Նվագները» և մանավանդ Նահապետի եր-
գերը, Թադիադյանի «Տե՛ր կեցցո՞ղ ու զՀայս»
երուն ազգային երգը (Նալբանդյան), մեր
սրանշիլի «Միժեռնակ»-ը, Նալբանդյանի մի
շուրք բանաստեղծությունները: Իսկ Պատկան-
յանը, նրա հոշակավոր «Արարսի արտասուքը»
և շատ ու շատ ուրիշ գործեր:

Նար-գոսի հարցը Շիրվանզադեի տեղի
հաստատումից մի քիչ նեղվածք է ստեղծվել
Նար-Գոսի համար: «Շիրվանզադեի ստեղծա-
գործությունը,— գրված է մենագրության
մեջ,— բիշ չեն սեպրել նաև պահպանողական-
ները, ամեն տեսակ անսուրբ ու հակազգային

7 Հ. Թումանյան, Շիրվանզադե,
էջ 114:

8 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար
ժողովածու, հատ. 1, էջ 279:

9 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար
ժողովածու, հատ. 3, էջ 120:

10 Ն. Գեգար, Երկերի ժողովածու, հատ. 6,
Երևան, 1955, էջ 38:

րան տեսնելով նրա մեջ: Պահպանողականության ազդեցության տակ այդ շրջանից չկարողացավ իրեն հեռու պահել մինչև իսկ մեր նշանավոր գրող Նար-Դոսը... Նա մի ամբողջ պոլիմիկական վեպ («Պայքար») գրեց Շիրվանզադեի դեմ, նկատի ունենալով «Արամբիկ»¹¹:

Այստեղ Նար-Դոսի աճունը, անզույժ ձեռնարկման հետևանքով, վերավորական չափով մտ է գրված պահպանողականներին, անուրբ ու հակազդային բաներ տեսնողներին: Այնուհետև բամբակյանը սխալ է համարում այն կարծիքը, թե «Արամբիկի կերպարը թուշիկ տեղ է գրավում վեպում («Մահ» — Վ. Պ.) ցենզուրային արգելքների պատճառով»¹²: Մեզ հայտնի բազմաթիվ փաստերից հիշենք վեպի տպագրության ընդհատումը 1895 թվականին, բանակցությունները դրաքննական օրգաններին հետ մինչև 1911 թվականը և այդ առթիվ (Արամբիկի կապակցությամբ) Նար-Դոսի ուղղակի վկայությունները «...Ստիպված եմ շատ բան քողարկել, — գրել է նա, — որպեսզի խեղճ գրվածքս ազատ մնա այն անխնա ավերումից, որ գործում է աստվածապա՜հ Ռուսիայի կարմիր թանարը»¹³: «...Դեռ ի նկատի պետք է ունենաս, — գիմել է նա ընկերոջը, — որ զլխավորը, ինչ որ իսկապես հարկավոր է, երկրորդ պլանի վրա եմ գրել, աշխատել եմ որքան կարելի է քողարկված անցկացնել»¹⁴: Այս վկայություններին չի կարելի կասկածել: Վեպի տարրեր ձեռագրերի համեմատությամբ դրա լավագույն ապացույցն է: Նար-Դոսը, օրինակ, ստիպված էր Արամբիկի Արևմտահայաստանի դեպքը նրա և հորեղբոր դստեր անհույս սիրո հետ կապել: Սա, իհարկե, քողարկում է: Իսկ վեպի վերնագիրը՝ «Վ. որ մամուլում այն տպագրվել է «Մեծ գործի սկզբում» վերնագրով, որ իսկուհին մտածել է տալիս, թե ո՛րն է մեծ գործը՝ Արամբիկի սկսած գործունեությունը: Իհարկե, այլ հարց է, որ այդ քողարկումից վեպը չի շահել: Մենք, օրինակ, գտնում ենք, որ Նար-Դոսը «զլխավորը» գրել է ոչ թե «երկրորդ», այլ ավելի հետին պլան և այնքան խորն է քողարկել, որ առանց հեղինակի վկայությունների (նամականերում) և ըննադատությունների միջամասնությունների — բացահայտումների գրեթե ան-

հնար է «Մահ»-ը ընկալել իբրև «հայրենասիրական շարժման» մասին գրված երկ:

Նար-Դոսի ստեղծագործությանը տրված ընդհանուր գնահատականը ևս մեզ վիճելի է թվում: Ճիշտ կերպով ըննադատելով Շիրվանզադեի երկերում հոգեբանություն չտեսնողներին, ուսումնասիրողը գրում է. «Շիրվանզադեն եթե հիմնադիր էլ չէ հոգեբանական վեպի, ապա այդ ըննադատումն ամենախոշորն է և ամենատաղանդավորը»:

Սովորաբար այս գերը մեզանում վերագրել են Նար-Դոսին: Անժխտելի են Նար-Դոսի հոգեբանական վերլուծություններ կատարելու, մարդկային ներքին տեսնելու կարողությունները: Բայց անժխտելի է և այն, որ իր մի շարք վեպերում՝ «Պայքար», «Մահ», Նար-Դոսը սուր է տալիս պսիխոլոգիզմին, ինքնանպատակ հոգեբանությանը, մինչև իսկ նատուրալիզմին: Նար-Դոսի մոտ արդեն երևան են դալիս սեալիզմի բայթայման նշանները, բանի որ նա իր երկերում մի շարք դեպքերում չի տեսնում արտաքին աշխարհի ու հասարակական միջավայրի վճռական դերը մարդու հոգեկան աշխարհի վրա»¹⁵:

Մենք ևս Շիրվանզադեի երկերում տեսնում ենք հերոսների հոգեվիճակների խոր հոգեբանական վերլուծություններ և ճիշտ չենք համարում հոգեբանական վեպը միայն Նար-Դոսի հետ կապել: Մենք չգիտենք շատ են Նար-Դոսի մոտ այնպիսի էջերը, որոնք մեզ հիշեցնեն, օրինակ, Յիլկ Ամրամին ցնցող դրաման, Նուվու տաղանդի ուժով ներկայացված նրա հոգու տակնուվրայությունները, փոթորիկը: Ինչ վերաբերում է պսիխոլոգիզմին, ինքնանպատակ հոգեբանությանը, մինչև իսկ նատուրալիզմին ու սեալիզմի բայթայման նշաններին, դրանք մենք խիստ վիճելի ենք համարում: Այս հարցում Շիրվանզադեի և Նար-Դոսի տարբերությունը նյութը բացահայտելու և «մատուցելու», գրական հնարանների մեջ է: Ինչպես նկատվեց մամուլում, Նար-Դոսը մարդու ներքինը դարձնում է մի լուսարձակ, որով լուսավորում է տեսնում է այդ ներքինը պայմանավորված ու սնած արտաքին, «գրսի» աշխարհը: Իսկ Շիրվանզադեն այդ դրսի աշխարհի նկարագրությունից է գնում դեպի հերոսների ներաշխարհը»¹⁶:

Նար-Դոսի մոտ սեալիզմի բայթայման նշաններ տեսնելը ճիշտ չէ և, թերևս, հետադուր

11 Հ. Բ. Մամբրազյան, նշվ. աշխ., էջ 8:

12 Նույն տեղում, էջ 240:

13 «Երական ժառանգություն», հատ. 1, Երևան, 1961, էջ 164:

14 Նույն տեղում, էջ 178—179: Տե՛ս նաև Տ. Գ. Հարությունյան, Նար-Դոսի «Մահ» վեպը, Երևան, 1961:

15 Հ. Բ. Մամբրազյան, նշվ. աշխ., էջ 273:

16 Ավելի հանդամանորեն տե՛ս Գ. Հովսեփյան, Նար-Դոս, Երևան, 1961:

ձևով հիշեցնում է, կրկնում ենք՝ հեռավոր ձևով, մի ժամանակ բավական տարածված այն կարծիքը, թե սկսած անցյալ դարի վերջից և մեր դարասկզբից բնագատական ունալիզմը աճում է ապրում, քայքայվում, վերասերվում և սկսում է տիրապետող դառնալ նատուրալիզմը։ Այդ կարծիքի դեմ են նաև հայ գրականության փաստերը։ Չէ՞ որ այդ ժամանակ են գլխիվ Շիրվանզադեի բոլոր գլուխ գործոցները՝ «Կոտոս»-ը, «Արտիստ»-ը, «Վարդան Ահրումյան»-ը, «Պատվի համար»-ը, Հ. Թումանյանի «Անուշ»-ի մշակված տարբերակը, «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը», «Փարվանա»-ն, մի շարք բանաստեղծությունները, Նար-Դոսի և մեր մյուս նշանավոր գրողների շատ անմահ երկերը։ Այդ տեսակետի հիմքերից մեկը սոցիալիստական ունալիզմն ու բնագատական ունալիզմը միմյանցից անջրպետելու ու միմյանց հակադրելու տենդենցն է։ Ինչպես նկատել է Թամրազյանը, բնագատական ունալիստները ունույնցիտն ծրագրեր չեն առաջադրել, նրանք չգիտեն բուրժուական հասարակությունից ազատվելու ուղին, բայց բնագատելով այդ հասարակության այլանդակությունները, աշխարհացի պատկերելով կյանքը, նրանք օգնել են ազատագրական պաղափարների պարզացմանն ու տարածմանը։ Այս հարցերը մենագրության մեջ միանգամայն ձիշտ մեկնաբանություն են ստացել և միայն ցավել պետք է, որ Թամրազյանը այդ խնդիրների ոլորտից բոս էության դուրս է դրել Նար-Դոսին և նրա մոտ, հակառակ փաստերի, ունալիզմի քայքայման նշաններ տեսել։

Թամրազյանը թերի է համարում Սունդուկյանին բնագատական ունալիզմի հիմնադիրը։ Թամրազյանը դրամատուրգիայում։ Իրավացի է երպով դիտելով, որ բոլոր ժանրերի համար էան ընդհանրություններ, նա գրում է, օ...Ք. Սունդուկյանի դրամատուրգիան վիթխարի ազդեցություն է թողնում հայ արձակի, մինչև անգամ պոեզիայի զարգացման ընթացքի վրա. «...ուղղություն տալիս՝ գրական-բնագատական ունալիզմին, սկզբնավորում գրական տիպերի, բնագատությունների մեծ շարք, օրինակ տալիս հասարակայնորեն բացասական և հասարակայնորեն դրական տիպերի ստեղծման մեջ։ Այնուհետև Բաֆֆին ու Պոռչյանը, Շիրվանզադեն ու Լաւ-Դոսն անցնում են նրա գծած նախադրյալով, ձգտելով արձակը տանել Սունդուկյանի դրամատուրգիայի պաղափարական-գեղարվեստական ուղիներով»¹⁷։ Ուսումնասիրողը, զար-

գացնելով իր տեսակետը, հաջորդ էջերում պնդում է, թե «Պ. Պոռչյանը անտարակույս գրողում է առել Սունդուկյանից», «Իրեն անմիջական նախորդ ու ուսուցիչ է ունեցել մեծ ունալիստին (Սունդուկյանին—Վ. Պ.), հետևել է նրա ստեղծած տրագիցիային, կերպավորման սիստեմին, բնագատական ոգուն, կյանքի հետազոտության եղանակին»¹⁸։ Ապա՝ «Սունդուկյանի ստեղծագործությունը խոր ազդեցություն է բողել նաև Բաֆֆու և Լաւ-Դոսի Պատկանյանի վրա»¹⁹։

Սեռ այստեղ չափազանցված ու վիճելի են թվում այն պնդումները, թե Սունդուկյանի դրամատուրգիան «վիթխարի ազդեցություն է թողել... պոեզիայի զարգացման ընթացքի վրա», թե այն ուղղություն է տվել «գրական-բնագատական մտքին», թե «Բաֆֆին ու Պոռչյանը, Շիրվանզադեն ու Նար-Դոսը անցնում են նրա գծած ճանապարհով» և վերջապես՝ «Սունդուկյանի ստեղծագործությունը խոր ազդեցություն է թողել նաև Բաֆֆու և Լաւ-Դոսի Պատկանյանի վրա»։ Մենք մեր պոեզիայի վրա Սունդուկյանի թողած «վիթխարի ազդեցության» և նրա՝ «հայ գրական-բնագատական մտքին ուղղություն» տալու մասին չենք ուզում հանգամանորեն խոսել, որովհետև ուսումնասիրողը ինքը ևս չի փորձել հիմնավորել իր այդ պնդումները, որպեսզի մենք քննենք նրա բերած փաստերը։ Անցնենք Պոռչյանի՝ Սունդուկյանի գծած ճանապարհով գնալու հարցին, կարծում ենք Պոռչյանը իր ճանապարհի հարցը շատ իմաստով լուծել էր «Սոս և Վարդիթիոս»-ում, և «Տեցեր»-ն ու «Հացի խորհրդ»-ը նրա ստեղծագործության օրգանական շարունակությունն է, նրա կենսափորձի, սրտես աչքով կյանքում, մասնավորաբար գյուղում, տեղի ունեցող (Սունդուկյանի մոտ բաղաբն է) փոփոխությունների ուսումնասիրության արդյունք։ Այսինքն «Հացի խորհրդ»-ը, «Տեցեր»-ը պալիս են հայ գյուղի վիճակի դիտողություններից, Միկիտան Սարոն՝ Աշտարակից և ոչ «Պեպոս»-ից։ Այլ բան է խոսել ընդհանրությունների, նմանությունների մասին։ Այդ հարցին անդրադարձել է Թումանյանը։ օ...Աղայանն ու Պոռչյանը հարազատ լեզվով գյուղի խաբարն են բերում. Սունդուկյանը թիֆլիսի բարբառով աղբատին ու հարստին, վաշխառուին ու տանջվածին բնա է դուրս հանում և այսպիսով ստեղծում գրականություն և գրական կյանք... Պոռչյանը, որ թյուրիմացաբար իրեն Արուսյանի աշակերտն է համարում, որովհետև գրողում է առել նրանից, մեղ-

¹⁷ Հ. Թ. Թամրազյան, նշվ. աշխ., էջ 120։ Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Վ. Պ.

¹⁸ Նույն տեղում, էջ 132։

¹⁹ Նույն տեղում, էջ 133։

տալիս է գյուղական կյանքն իր ամբողջ մերկայամբ. գյուղական տիպերի մի ամբողջ ալբոմ են ներկայացնում նրա բոլոր գրվածքները, առանց որևէ տեղեկացի: Նույնն է Սունդուկյանը Թիֆլիսի կյանքի վերաբերմամբ²⁰:

Բերելով այս քաղվածքը, Թամրազյանը ավելացնում է. «Միայն մի փոքրիկ ձշտում՝ Սունդուկյանը... նախորդել է բոլորին»: Այդպիսի էլ ուսումնասիրողի վերև բերված եզրակացությունները: Նախ դա «փոքրիկ ձշտում» է՝ և ձշտում էլ չէ, որովհետև Թումանյանը իրավացի է՝ վերջի վերջո մի գործի մյուսից առաջ տրված լինելու հարցը պատճառ չէ անպայման դրանց մեջ ազդեցություն տեսնելու: Մենք Սունդուկյանի «ստեղծագործության խոր ազդեցություն» չենք տեսնում նաև Բաֆֆու և Պատկանյանի ստեղծագործություններում, էլ չենք ասում: որ Բաֆֆուն բնավ չի կարելի Սունդուկյանի գծած «անպարհույ՝ գնացած հեղինակ համարելու» նաև կողմերով տարբեր են նրանց ընդգրկված կյանքն ու բարձրացրած հարցերը, և շատ այլ հանգամանքներ:

Ինչն ալ խոսում էինք Սունդուկյանի դերի գերազանցատման մասին, այժմ թերազնահատման մի փաստ, թերևս պատահական և անհաստատ ձևակերպման հետևանք. «Առհասարակ,—գրում է Թամրազյանը,—գիտյոք Շիրվանզադեի դրամաներում ավելի հավար ու նշատակալից է, քան իր մեծ նախորդի մատ»²¹: Ո՛չ: Նախ, ի՞նչն ենք ինչի հետ համեմատում՝ եթե վերցնում ենք Շիրվանզադեի դրամատուրգիական լավագույն գործերը («Պատվի համար»-ը, «Նամուս»-ը, «Չար ոգի»-ն), ապա դրանք պետք է համեմատել Սունդուկյանի լավագույն գործերին («Պեպոս», «Խաթարալա», «Փանդած օջախ») և այն՝ ժամանակի գծված է ասել՝ Պեպոսի ու Զիմզիմովի՝ գիտյոքն է ավելի հավար ու նպատակալից, եթե էլ իրար ընդմիջում են թարգմանի Գուգե պետք է շատ զբաղվել այս հարցով:

Սենսացիոն մեջ կան նաև անհաջող ձևավորվածություններ (էջ 61, 96, 252, 373, 446, 576), կրկնություններ (46 և 271, 307 և 365), անփութություն մասնակի փաստերի Օրինակ՝ 220-րդ էջում ենթավերնագրի տակ նշված է «Երակ», բայց այդտեղ ոչ մի խոսք չկա «Երակ» վիպակի մասին, այն վերլուծվում է ուրիշ բովանդակում: Մի օրինակ էս 37-րդ էջում առված է, թե 1879 թվականին Բաբում կադմակերպվում է գրադարան, իսկ 1881 թ. ընթերցա-

լան և Շիրվանզադեն դասնում է գրապահ: Հետո բերվում է Շիրվանզադեի խոսքը, թե «Այն ժամանակ էս տասնութին տարեկան էի: Դրանք հակասում են միմյանց: Ճիշտն ալն է, որ գրադարան կազմակերպելու ժամանակ Շիրվանզադեն եղել է 21, իսկ ընթերցարանի կազմակերպման ժամանակ՝ 23 տարեկան: Շիրվանզադեի հուշերում շատ են այս կարգի սխալները և պետք է դրանք ստուգելուց հետո օգտագործել: Նա, օրինակ, «Կյանքի բովից»-ում ասում է, թե «Արտիստ»-ի Հեռին էս տեսել եմ Օդեսայում 1899 թվականին, բայց գրել եմ 5 տարի հետո Բաբում»²²: Մի այլ տեղ՝ «Բմ երթառարդ և պատանի արվեստակիցներին» հղվածում՝ «Արտիստ»-ի Հեռին էս հանդիպել եմ 1898 թվականին Բաբում»: Եթե Օդեսայի ու Բաբում հարցը մի կողմ թողնենք, ուրեմն, «Արտիստ»-ը պետք է գրած լինի 1903 կամ 1904 թվականին, մինչդեռ հայտնի է, որ այն տպագրվել է «Մուրճ» լամպարի 1901 թվականի 5-րդ համարում: Վիճելի պնդումներ կան նաև Շիրվանզադեի յեզվի գնահատության, Մեքատ և Մարկոս Ալիմյանների կերպարների մեկնաբանության, «Գործանված»-ի գնահատության հարցերում:

Կարելի է ուրիշ դիտողություններ ևս անել: Մեզ, օրինակ, զարմացնում է, թե ուսումնասիրողը ինչպե՞ս է համաձայնվում Պոռչյանի «Ցեցեր»-ին Շիրվանզադեի տված գնահատականին (էջ 353):

Ինչպե՞ս է, որ ասանձին գլուխներում չեն վերլուծված գրողի «Կյանքի բովից»-ն ու հուշգրի մանկարները, Շիրվանզադեի այնքան արժեքավոր ևսթետիկական հայացքները: Ինչու մամուլն ու արխիվային նութերը նույն չափով չեն օգտագործված արձակ երկերը վերլուծելիս, որչափով որ օգտագործված են «Շիրվանզադեի դրամատուրգիան» գրքում:

Ամփոփենք. Մեր դիտողությունները, նույնիսկ սկզբունքային կարգի, բնավ չեն կարող փոխել գրքին տրված ընդհանուր գնահատականը: Մանավանդ, որ մենք չենք ասում, թե ուսումնասիրողը սխալվում է, այլ որ նրա կարծիքները մեզ թվում են վիճելի: Բայց այդ վիճելի տեսակետներն իսկ հեղինակն այնպես է շարադրել, որ դարձրել է «գիտականորեն վիճելի»: Այսինքն դրանք ոչ թե սխալ են կամ չիմանալու հետևանք, այլ տեսակետներ, որոնց հեղինակի հետ կարող էս վիճել, բայց և նշել նրա ուժը: Ավելին, այդ վիճելի հարցերի դնելն իսկ դիտական համարձակություն է, որովհետև թույլ գրականագետը սովորաբար չի

²⁰ «Թումանյանը քննադատ»։ Երևան, 1939, էջ 114—15։

²¹ Հ. Թամրազյան, Նշվ. աշխ., էջ 487։

²² Շիրվանզադե, Կյանքի բովից, Երևան, 1930, էջ 320։

մանի այդպիսի բարդ ու ծանր վեճերի մեջ, կհերադասի շրջանցել, լուծության տալ բարդ հարցերը:

Քամրազյանը գրել է հանգամանալից մեհադրություն, որի մեջ ոչ միայն շիրվանզադեադիտությունը բարձրացված է նոր աստիճա-

նի այլև ճիշտ են լուծված կամ դրված հայ գլխահանության պատմության համար կարևորագույն բազմաթիվ հարցեր:

Վ. ՊԱՐՏԵՂՈՒՆԻ

Բանասիրական գիտությունների
գոկտոբ-պրոֆեսոր

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ, *Հայկական մատենագիտություն. Ե—ԺԳ՝ ռու., Տատոր Ա, Հայկական ՍՍԽ ԳԱ Հրատարակչություն, 1959, XCV+1227 էջ, գինը 3 ռ.:*

Գրախոսվող աշխատությունը խոշոր երևույթ է հայ մատենագիտության պատմության մեջ, նյութերի ընդգրկման ծավալով՝ կատարյալը անցյալում լույս տեսած բոլոր տիպի մատենագիտություններից: Երկար տարիների համառու տրնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս գործը, որն ընդգրկելու է բազմաթիվ հետադիմություններ, իրավամբ կարելի է համարել հայ հին մատենագրության հանրագիտարանը:

«Հայկական մատենագիտություն» առաջին հատորը բովանդակում է Ա տառով սկսվող հայկական ինքնուրույն և թարգմանական դրական հուշարձաններն ու հեղինակները և ավարտվում Ասաբել Սալաճորեցի մատենագիրին նվիրված հոդվածով: Հատորը բաղկացած է շուրջ 100 ներածական ամբողջական էջերից և 1828 սյունակային էջերից: Բացի ընդարձակ ներածականից, գրքում տեղ են գտել նաև մատենագիտական բնագրերի, ինչպես նաև ձեռագրացուցակների բաժիններ, որոնց հաջորդում է բուն աշխատությունը՝ «Հայկական մատենագիտությունը»: Հատորն ունի հավելվածային, ինչպես նաև բնագրերի բաժիններ: Վերջում բերված է բնագրերի սկզբնատողների այբբենական ցանկը:

Գրքի ներածականում հեղինակը խոսում է հայ ինքնուրույն և թարգմանական գրականության ունեցած ազդյունաբերական խոշոր նշանակության մասին ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային գիտության համար, ապա կանգ առնում հայ մատենագիտության պատմության վրա: Այս կապակցությամբ ուշադրամ է հետևյալ ճշտումը: Մինչև այժմ հայ մատենագիտության պատմության սկիզբը համարվում էր XIX դարի վերջը, իսկ նրա հիմնադիրները՝ մխիթարյան նշանավոր հայագետներ Գ. Զարպհանալյանն ու Ա. Ղազարյանը: Հ. Անասյանը, հիմնվելով ցարդ շուտամասիրված բազմաթիվ ձեռագրական տվյալների վրա, ապացուցում է, որ հայ մատենագիտությունը

սկսվում է V դարից: Հեղինակը հանգամանորեն դրադում է հայ մատենագիտության ամենահին նմուշներով, որոնք հայտնի են «Կանոնական գրքերի ցուցակներ» և «Անկանոն գրքերի ցուցակներ» անուններով: Հիշյալ ցուցակները կազմվել են պաշտոնական եկեղեցու կողմից՝ աղանդավորների ստեղծած գրականությունը արգելելու նպատակով: Արժեքավոր է բերվող Արասյանի «Գիրք պատճառաց»-ի նկարագրությանն ու վերլուծությանը նվիրված հատվածը: Ներածականում ուսումնասիրվում են նաև շարականների ու պատմագրերի վերաբերյալ հնագույն ցուցակները, ապա հանրագումարի են բերված XIX դարում տպագրված հայ մատենագիտական բոլոր երկերը, որոնք բաժանված են մի շարք խմբերի: Ա խմբում հեղինակը դասում է այն գործերը, որոնց ծրագիրը եղել է դասավորել ու ներկայացնել հայ մատենագիտության ինքնուրույն ու թարգմանական գործերը: Բ խմբը այն գրքերն է, որոնք նվիրված են տպագրված հայերեն գրքերին: Գ խմբում մտնում են հայ պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները նկարագրող ցուցակները: Դ խմբի մեջ մտնում են հայագիտական բնույթ ունեցող հայերեն և օտար լեզուներով հրատարակված աշխատություններն ու հոդվածները: Եվ, վերջապես, Ե խմբը ձեռագրերի մատենագիտությունն է, այսինքն՝ ձեռագրացուցակները:

Գրքի ներածականին հաջորդող «Մատենագիտական բնագրեր» բաժնում (էջ XXXIX—LXXVI) ղեկեղված են ձեռագրերից և տպագիր աշխատություններից բաղկացած 25 ցանկեր, որոնք կարևոր արժեք են ներկայացնում ինչպես հայ մատենագիտության պատմության, այնպես էլ հայ բանասիրության համար: Նկատի ունենալով, որ ցանկերը մեզ են հասել մի քանի ձեռագիր օրինակներով, հեղինակը հրատարակել է նրանց հա-